



ՋՈՒՂԱՅԵՑԻ ՎԱՃԱՌԱՎԱՆԲ Ի ՎԵՆԵՏԻԿ

(Տես յ'էջ 120)

Ի. — Շատ անգամ յիշուած և լսուած են ի գիրս և յօրագիրս մեր, նաեւ ընդհանուր վաճառականութեան պատմութեան մէջ, Հայ վաճառականք Զուղայի, ԺՉ դարուն կիսէն վերջ՝ մինչեւ յ'ԺԸ դար. մեր Հայ-վենետաց պատմութիւնն ալ կը պահանջէ՝ հասած ժամանակիս քննել զանոնք ի վենետիկ, ուր՝ Մեծ և Փոքր Հայոց ամեն կողմերէ աւելի՝ բազմութեամբ եկած են, միանգամայն և աւելի հարըստութեամբ, վաճառքով և վաստակով։ Բայց նախ զայս պէտք է իմանալ, որ երկու Զուղա կայ, Հին և Նոր. առաջինն ի Հայաստան, Երասխ գետոյ եզերքը, ոսկից բնակիչքը Շահ Աբաս Պարսից թագաւորին բռնի հրամանաւ հանուելով քշուեցան ի Պարսկաստան, ի մայրաքաղաքն Սպահան, ԺԷ դարուն սկիզբը (1605) և անոր քով կամ դիմաց շինեցին երկրորդ և Նոր Զուղայն, և յետ շատ նեղութեանց՝ հօս ալ անեցան, հարըստացան, և վաճառականութեամբ սփռեցան կամ գնացին եկան՝ Եւրոպիոյ այլեւայլ շահաստանները, և աւելի ի վենետիկ։ Մեր յիշելիքն հիմայ այս Նոր Զուղայեցիները չեն, այլ Հիներն որք մեր ազգի պատմութեան մէջ՝ թէ և կարճ՝ այլ փառաւոր միանգամայն և զթաշարժ յիշատակ մի թողած են, որ և հասարակաց ծանօթ ըլլալով՝ ոչ հարկ և ոչ պատշաճ է մեզ կրկնել զայն, այլ միայն յայտնել զարմանքն իս՝ այդ Զուղայի գրեթէ խորհրդաւոր երեւման մըս։ զարմանալի՝ իր վաճառականական բարգաւաճանօք և հարըստութեամբ՝ թերեւս մեր երկրի ամէն քաղաքներէ աւելի, և անտարակոյս՝ իր ատենին. խորհրդաւոր, իր ծագման կամ այդ բարգաւաճանաց սկզբնաւորութեան անծանօթութեամբ. և իբրեւ յանկարծօրէն փայլելով, մնաւաւնդ թէ փայլատակելով՝ ԺՉ դարու վերջի երրորդ մասին մէջ, այնպիսի գրեթէ անծանօթ ծակէ մի, ինչպէս է իր դիրքն, քարոտ տեղ մի, որ թէ և շատ հին ատեն ճանչցուած է իբրեւ գեղ կամ աւան, այլ հազիւ թէ անկէ վերջը յիշուած ի պատմութեան, մինչեւ իր գոթադղ գերութիւնը և աւերումը։

Անկէ 30 կամ 40 տարի առաջ կը յայտնուին Զուղայի ճարտար վաճառականք ի վենետիկ, և ի պատմութեան վենետիկոյ։ Առաջին ծանօթ ինձ

Ջուղայեցիին այս քաղաքին մէջ՝ է յամի 1571 (յուլ. 19), խայրի? (Cayri) անուամբ մէկն, որ կը վճարէ իր պարտքը, 285 դոկաա, առ Յովնան Ամդեցի ո. Տէօլլեթընարի (Duulethiar կամ Dohaulattiar). Ջուղայի անունն ալ վենետիկեցի նոտարն կը գրէ Iula, թերեւ մոնալով f առաբ (Iulfa): Հաւանորէն Ջուղայեցի է և Կոնստազ ո. Ամիրի (Gondus de Armenia q^m. Amir de Azami), որ նոյն Ամդեցոյն հետ իր հաշիւը կը կնքէ (մայիս 29): Նոյն օր նոյն՝ Ամդեցին նոյնպէս փանաւի ո. Գեորգի հաշիւները կը կնքէ, որոյ հետ թէ ի Հալէպ թէ ի վենետիկ առեստոր ըրեր էր:

Մինչդեռ ի վենետիկ այս առաջին անգամ Ջուղայեցիք կ'երեւին մեզ՝ նոտարաց առջեւ, նոյն օրերը (14 օգոս. 1571) վենետիկ տէրութեան դեոպան մի վինչենցոյ Ալեսսանդրի (Alessandri Vincenzo) կը հասնէր ի Գազուին, ուր էր այն ատեն Պարսից շահն. հօս իրեն եկան քանի մի Հայ վաճառականք հարցընելու իրենց ընկերաց համար, որ շատ ապրանքով զրկած էին ի վենետիկ. Ալեսսանտրի իմացուց որ անոնք իրմէ շատ առաջ (1570) Գուքսէն լաւ ընդունելութիւն գտած՝ ճամբայ ելած էին դառնալու իրենց երկիրը: Այդ Հայերն ըսին որ իրենք Ջուղայի գլխաւորներէն են (esser signori della loro terra chiamata Diulfa), և թէ իրենցմէ մէկն իբրեւ իրենց գործակալ կը կենար ի Գազուին: Ասոնց միջնորդութեամբ յաջողեցաւ Ալեսսանտրի ներկայանալ առ Միրզա, Շահին որպէս, և իր Գրքսին կողմանէ բերած թուղթերը առաւ. ինչպէս որ կը գրէ ինքն իր տէրութեան, ի Գրաքովոյ (24 յուլ. 1572). և ասով յայտնի կ'ընէ այն Ջուղայեցի Հայոց համարակալութիւնը Պարսից արքունեաց առջեւ:

Նոյն իսկ Հայք ալ յիշեցուցին զայս՝ Ալեսսանտրեայ, երբ իր դառնալէն վերջ ի վենետիկ, հարկ եղաւ իրենցմէ երկու հոգի խաւերլ այս տեղ, մէկն Տերման (Derman) կոչուած, միւսն Սոնտուզ (Sondus) կամ թերեւս վերոյիշեալ Կոնստուզն. ասոնք առանց ապրանքի կաւ զային այս անգամ, որպէս զի արգելք չըլլայ ճամբուն, և շուտով հասնին, ու իրենցմէ առաջ եկողներուն ձեռօք Տըլֆին կոչուած Գրամասեղանոյ (Banco Dolfin) մէջ դրած ստակին հանեն. իբրեւ ծանօթ բարեկամ կ'անուանեն և կ'աղաչեն որ Ալեսսանտրի դիւրացընէ այս գործս, ինչպէս որ մենք ալ կ'ըսեն, քեզի այս տեղ դիւրացուցինք ընելիլը⁽¹⁾. և զարձեալ երբ առիթն հանդիպի՝ կ'օգնենք քեզի կամ քու ազգայնոց: Այս թուղթս գրուած էր ի Ջուղա, հայերէն, հոկտեմբերի սկիզբը, տարին նշանակած չէ (պոնէ իտալերէն թարգմանութեան վրայ, վասն զի բնագիր հայերէնն չկայ), այլ գրեթէ անտարակոյս գրուած

1. Siamo sicuri che vi saranno raccomandati in ogni occasione; essendo anco noi offerto tanto prontamente quando eravate qui: il che facendo ne teniremo continua memoria, e ne dimostreremo effetti quando ne se appresenterà occasione in servir voi o altri di vostra nazione.

է 1572ին, Գրողքն՝ որ զիրենք սիրելի բարեկամ կ'անուանեն Ալեսան, որեայ և անշուշտ Զուլայի գլխաւորներէն էին, կոչուին Թեհեքեսիս (Tehchesiss), Միթիման և Մարոնարս. կ'իմացընեն ալ որ իրենց երկու պատգամաւորներն առանձին ըսելիքներ ալ ունէին, որոնց առանց տարակուսելու հաւատայ, վասն զի լաւ և արժանաւոր անձինք են: Հասան ասոնք ի վեներտիկ, և յայտնեցին իրենց գաղտնի յանձնուածը, որ էր Պարսից շահին պատրաստութիւնն ի պատերազմ ընդդէմ Օսմանեաց, նոյնպէս ասոնց ալ թէ պատրաստուիլն և թէ մզկիթաց մէջ աղօթելն, որ իրենց և Պարսից մէջ եղած հաշտութիւնն չարութի, որպէս զի իրենց նաւատորմիդն նոր փորձանքի մի չհանդիպի ի քրիստոնէից: Աւելորդ է ըսել թէ որչափ կարելւոր էին վեներտաց համար այս բեղեկութիւններն. և թէ անշուշտ ո'րչափ խնամքով Ալեսանտրի ալ օգնեց Զուլայեցւոց խնդրոյն:

Այս երկու պատգամաւորներէն վերջը ծանօթ են ի վենետիկ իսկէնտեր ո. Իմիրի Զուլայեցի (de Persia loci de Girulfa), որ 1573ի (մայ. 8) իրեն գործակալ զրաւ նօտարի գրուածքով Յր. Կալլոյ Մուրաւեցի մի (Մուրան վենետիկոյ գրեթէ կպուած կղզեակ մ'է): — Յաջորդ տարին (1574, մարտ 3), ծանօթ Գէորգ ո. Թէոդորի սէնսարն՝ Կարկաւեցի Յարութեան ո. Սիմոնի հետ կը վկայեն նօտարի առջեւ, որ Շաալար Զուլայեցին ութ ամսէ ի վեր ի վենետիկ էր, և ստոյգ այս էր անունն (Sciavalat), և այսպէս ալ գրուած էր Մովսէյի մաքսատան դիւանաց մէջ. իրենց ալ վկայ եղաւ ուրիշ Շաալարի որդի Հալէպցի Աղեքսանդր: Այս վկայութեանց պատճառն էր Շաալարի վկայ հրամանութիւնն, որ և երկրորդ օրը (4 մարտ) նօտար կանչելով իր բնակարանը՝ ի Հայոց տունն կամ անոր մօտ ի Ս. Յովիան, կտակը գրել տուած է; ինքն թուրքարէն ըսելով մէկու մի (Պիտեղգա), նա ալ պարսկերէն թարգմանելով ուրիշի մի, սա ալ խաւերէն գրել տալով նօտարին. կը յայտնէ Շաալարի իր հօր անունը Գուպար, հօրեղբօրը՝ Յակոբ, որոց որդին Մուրադիկ էր ի վենետիկ, և զսա կ'ընէ իբրեւ կտակակատար. իսկ ժառանգ՝ զանոնք որ հայերէն կտակի մէջ նշանակեր էր (իբր քաղաքացի Նախիպի ձեռքով). անոր կը յանձնէ իր հոգւոյն համար պատշաճ համարած ողորմութիւնը տալ: Մահուան և թաղման յիշատակն չկայ, որովհետեւ այն տարուան մեռելադիրքն կորսուած են: — Նոյն օրերը (12 յունիս, 1574) Կարապետի որդի Յովհաննէս Զուլայեցի ալ իրեն գործակալ զրած է վենետիկցի մի Հերոնիմ Ֆորեստի, իրեն վկայ և թարգման եղած է վերոյիշեալ Հալէպցի Աղեքսանդրն Շաալարի որդի, որոյ հայրն Հալէպի զրամանոցի վարպետ կամ վերակացու է եղեր, Sauolet, mistro della Cecha in Aleppo. Յովհաննէս Կարապետի որդին և Նախիպ կամ Նաաուպ Մանուէլի որդի Զուլայեցիք կը յիշուին նաև մէկ թատեր կամ ողբերգութեան յարմար դիպուածի մէջ ալ. որ է հետեւեալն:

Այս թուականէս իբր տասն տարի առաջ Զուլայեցի երիտասարդ կամ չափահաս մէկ մի Յովսէփ անուամբ կու գայ ի վենետիկ, ի ճենովա, և

խաղաղութիւնը օրինակ քաղաքներ, և ինչպէս կ'երեւի Դոմինիկի մօտ Ալա գետէն Դոմինիլիլլա (Dominicilla) անուամբ տարածուի մի կը սիրահարուի . 1573^ն մահն վրայ կը հասնի . ստացուածքը ասոր կը կտակէ Յովսէփ : Իր հայրն Պապսա կամ Բասսա որդի Մարգարայ ողջ ըլլալով և լսելով դիւ պուածը՝ կու գայ ի վենետիկ, կ'իմանայ եղածը, և կը ջանայ ձեռք բերել իր որդւոյն թողածը . որոյ համար շատ ժամանակ կ'անցնի, և կը ստիպուի ինքն ուրիշներէ փոխ առնուլ՝ դատաստանի ծախքերը վճարելու . պարտատէրաց մէկն է Շաւալաթի որդի Աղեքսանդրն, ուսկի առեր էր 310 դուկատ, զոր կը խոստանայ յամի 1575 (մարտի 18 և 21) վճարելու, նոտարի առ ջնւ . վկայ կ'ըլլան Նասուպն և Գէորգ Ե . Թէոդորի, և Տէր Թոմաս Ե . Գէորգայ Հըմքէյֆֆի Յակոբի քահանայ մի . Կարապետի որդի Յովհանն ալ ոչ միայն երաշխաւոր կ'ըլլայ Բասսայի, այլ զուրկ կը կենայ դատը առաջ տանելու, ընկեր առնելով իրեն քանի մի Ջուդայեցիներ, Աղեքսանդր Ե . Անդրէի, Միսսայա ? (Missaia), Մոռաա և Կիրակոս (Chiragatus) . ասոնք Բասսայի հետ կը պնդեն, թէ Յովսէփ իր երկրէն դուրս չելած՝ հօն թողեր էր 9 կամ 7 տարուան որդի մի Հայրապետ անուամբ, որուն կ'իկնայ ժառանգութիւնն : Ասոր հակառակ ուրիշներն կ'ըսէին թէ Յովսէփ 15 տարի է որ խաղաղ եկած էր, և այն տարիքով որդի չէր կրնար աւնենալ իր հայրենիքը : Ասոնք խօսքը հաւանական կամ քննութեան արժանի համարելով, վերոյիշեալ թուականին (1575, դեկտ . 23) Հասարակաց Փաստաբանից առնուեալ դատարանը կանչեցին Յովհաննու կողմնակիցները . միայն սա և Բասսա եկան . մէկայլ ընկերքն աներեղթ եղան . անոր համար դատաւորք զանոնք խորագիւ և սուտ վկայ համարելով՝ դատաւորքեցին (23 յուն . 1576), որ եթէ բռնուին, հրապարակին երկու սեանց մէջ ալ ձեռքերնին և լեզուին կտրելով ի բանտ դրուին տարի մի, յետոյ վրէնտուին վենետիկոյ սահմանէն . և եթէ նորէն զառնան՝ երկու տարի բանտի դատաւարտուին : Իսկ Յովհանն և Բասսա իրենց բաժին վրայ հաստատ կեցան, թէ և բանտուեցան : Միւս կողմէ Դոմինիլլա իր որ և է կերպով ժառանգած չկորուցընելու համար՝ կ'իմացընէր, որ այս խնդրոյս վրայօք քննութիւն եղած էր ի Ճենովա և իրեն տրուած էր իրաւունքն : վենետիկոյ դատաւորք փաստաբան մի խորեցին ի Ճենովա . սա քննեց իմացաւ որ սուտ է կնկան ըսածն . այն ատեն (1579, սեպ . 3) դատաւորք արձկեցին ի բանտէ զՅովհանն և զԲասսա . և ոչ միայն Յովսէփայ թողածը վճռեցին առնուլ և տալ իր հօրը և որդւոյն, այլ և Դոմինիլլայի օթիւնէն առնուլ և տալ Բասսայի և Յովհաննու՝ իրենց դատաւարանի համար ըրած ծախուց փոխարէն : վճռողքն էին 36 դատաւորք, որոց միայն երկուքին քուէն անորոշ էր :

վերոյիշեալներէն զատ եկեր են անշուշտ շատ Ջուդայեցիք ալ ի վենետիկ, որ որոշակի իրենց քաղքին անուամբ յիշուած չեն, մենք ալ չուզելով կարծեօք ընդունիլ, քանի մի անտարակոյսներ ալ յիշենք ԺՋ դարուն վերջի

և ժէ դարու առաջին տարիները: Այսպէս Տիրան մի, Thirano գրուած յամի 1593, որ 110 դուկատ պարտական էր Պօղոսի ո. Բարսղի. (Basser գրուած). սա իրեն գործակալ դրաւ (օգոստ. 23) Հայոց ճարպիկ սէնսար, ներէն մէկը, Մարկոս Մոռաատ ո. Յակովբայ, առնելիքը պահանջելու համար, կամ ուղղակի, կամ Տիրանայ ինչքը գրաւելով. վկայ եղան մեզի ծանօթ Գէորգ տնպահն Հայոց (ո. Թէոդորի), Մեղզոն վաճառականն, Մարկոս վաճառական ո. Շահնշայի? (Iansa): — 1599, մայիս 7. Գէորգ Զուղայեցի Սէրտար մականունանալ կը վկայէ Մարգարեան Տէր Յակոբայ պատգամաւոր երթալն առ իշխանն Վրաց, և ի Պարսա. — Կարապետ ո. Նասիպի (Թերեւս վերոյիշելոյն), որ առնելիք ունէր 360 դուկատ Հոռովկայեցի Յովսէփայ որդի Խաչատուրէն. սա խոստացաւ (1601, փետր. 6) որ երբ զառնայ այն քաղքէն ուր պիտի երթար, վճարէ ամբողջ պարսքը. Կարապետ ալ կը խոստանայ որ երբ ընդունի առնելիքը՝ տայ Խաչատուրոյ զոյգ մի չուխայէ գուլպայ կամ զանկապան վաթսունոց? (Un paro di calce di panno de sessanta. չմհասկընար ինչ տեսակ է այս), իբրեւ ընծայ մի և ոչ այլ ինչ. — Աւետիք Զուղայեցի ո. Խոռատապաշի (1602, մայիսի 21) կ'ընդունի իր առնելիքը ի Սիսիանցի Ղազարայ ո. Յովհաննու, և անգորրապիր կու տայ անոր. երկու օր վերջը (մայիս 23), իրեն գործակալ կը դնէ նստարի առջեւ՝ գլխիստափոր ո. Տոնատոյ Սուրիան անուանեալ, (Ասորի կամ Հալէպցի կարծուի) Թուրքաց սէնսալը, որ ընդունի իր ապրանքները, երբ հասնին նաւով, և ուրիշ ո՛ր և է առնելիքը, և այլն. — Գրիգոր ո. Մարտիրոսի և Գէորգ ո. Անտոնի Զուղայեցիք իրենց գործակալ կարգեն զՄարկոս Մոռաատ սէնսալն և անոր որդին Յակոբ, որ պահանջեն Տոնակուիչի (Tornaquinci) անուանեալ Ֆիորենցացիներէ՝ իրենց ծախած մետաքսի գինը. վկայ կ'ըլլան վերոյիշեալ Սեբաստացի Մարկոսն ո. Շահինշայ, և Զուղայեցին Դանիէլ ո. Տեփրիշի (1602. հոկտեմբ. 21): Այս Դանիէլ ալ քանի մ'օր վերջը (25 հոկտ.) նոյն Մարկոս Մոռաատը և որդին իրեն գործակալ կ'ընէ, ընդունելու 13 հակ Մանածի գինը, զոր ծախեր էր խաւացի (Պերտոն Յովհան) բամբակագործին. — 1603, յանուարի 10, կը վախճանի Բովհանէն Զուղ. ո. Պապայ Ջերմով հիւանդացած ըլլալով. նախընթաց գեկտ. 16^Բ կտակը գրել տուեր էր, գործադիր կարգելով իր ճամբու ընկեր և հայրենակից Սիւսեան, որուն կ'ապրապրէ իր ապրանքները ծախել երթալ յԱսորիս, անկէջ ալ 'ի Զուղա և անոնց գինը յանձնել Սէֆէրի ո. Խաչկայ. Հատարակաց մեռելազրոյց մէջ կ'երեւի սխալմամբ 19 տարուան գրուած է վախճանելն, որ անհաստատի է. մահաւանդ որ յայտնապէս նոտարական գրուածոց մէջ կը յիշուի յամի 1596 (մարտ 16) իբր 55 տարուան. յիշուելուն պատճառն ալ նշանաւոր է. Խաչատուրոյ ո. Աւետիք Հալէպցին Կղեմէս Ը Սրբ. Պապէն վկայագիր առեր էր (12 յուլ. 1595) ստակ ժողովելու իր ընտանիքը Թուրքաց գերութենէն ազատելու համար՝ հիմայ ի վերետրիկ գտուելով՝ իրեն գործակալ կարգեց զՅովհան ո. Պապայ ողորմութիւն ժողովելու: Այս բանիս

վկայ կ'ըլլան Գեորգ Առաքելի որդի սէնսալ մի, և Ասորի վաճառական մ'ալ (Բենեդիկտոս)։ — 1607, նոյեմբ. 24. Մոսրատ Զուգ. ս. Սեփեթի անդորրագիր կու տայ առ վերոյիշեալ Քրիստափոր ո. Տոնատոյ՝ իր 24 զուկատ առնելիքը ընդունելուն համար։

Շարունակելի

ՄԱՅԻՍԻ ԳԻՇԵՐ



ԳԻՇԵՐ մայիսին՝ սեւաչաւի մեղուշ՝
 Թաղծեալ կ'ողջունէ այգուն արշալուշ .
 Շողուն փալիւլուն աստղերու մեծ պար՝
 Սըրտկոտրուկ յերկին մարին թալկաբար :
 Յանկարծ արուեսակըն ցոլայ սպիտակ ,
 Եւ լուսին թողու նմա դիր դահւորակ :
 Ահա առուտուն շորորայ հողմիկ ,
 Սըրտեւոյ ըզհոտ ծաղկանց անուշիկ :
 Աքլորներն աշխուժ ձեներնին ձըգած ,
 « Մըշակ , կո՛ւշիկո՛ւ , աղօթրանն է բաց » .
 Զարթել են թըռչներ յանուշ ճըլլուրիկ ,
 Գովեն սրբալիի գընութիւնն աղուորիկ :
 « Ո՛հ , ի՛նչ գեղեցիկ ես՝ սիրուն բնութիւն ,
 Քո մէջ յայտնուի Հաստիյն գորութիւն ,
 Այնոր ձեռքով՝ դու եղեր ես ասանկ ,
 Որո՞ւ մըտքի դեռ մնայ տարակուսանք » :

Հասփ . Երիսբա .

Թրգմ. ի վրաց .

Հ. Դ. Գաղ .

